ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2022 թվականի թիվ 229 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 204-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն և 2022 թվականի փետրվարի 23-ի թիվ 204-Ն որոշումներով և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի 2022 թվականի օգոստոսի 18-ի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 204-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 536371.0 հազար դրամ գումարից 25416,230 հազար դրամ վճարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 11301,125 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից 2022 թվականի հուլիս ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՓՈԽԱՐԻՆՈՂ ՆԱՐԵԿ ՂՈՒՇՉՅԱՆ

18.08.2022

X

Подписано: GHUSHCHYAN NAREK 4007810273

18 օգոստոսի 2022թ.

քաղաք Իջևան